

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2020 թվականի Տարբեր 3-ի

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՏԻՊԻԿ ԹՈՔԱԲՈՐԲԻ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՍԿ 3.1.1-0-22-20
ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

N 68-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 9-րդ կետի 20-րդ ենթակետին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Արցախի Հանրապետությունում ատիպիկ թոքաբորբի համաճարակաբանական հսկողություն» ՍԿ 3.1.1-0-22-20 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ


 Ա. ԲԱՂՅԱՆ

2020 թվականի Տարբեր 3-ի
ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՏԻՊԻԿ ԹՈՔԱՐՈՐՔԻ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՍԿ 3.1.1-0-22-20
ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ**

Բ Ա Ժ Ի Ն 1

ԿԻՐԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 1

ԿԻՐԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները և նորմերը (այսուհետ՝ կանոններ) նախատեսված են Արցախի Հանրապետության տարածքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար՝ անկախ սեփականության ձևից և գերատեսչական պատկանելությունից:

2. Սույն կանոնները սահմանում են ատիպիկ թոքաբորբի դեպքերի հայտնաբերման, ախտորոշման, վարման, բուժման, համաճարակաբանական հսկողության, դրա ձևերի, ախտահանման, մանրէազերծման, նախամանրէազերծման աշխատանքների, ատիպիկ թոքաբորբի վարակի հսկողության, ատիպիկ թոքաբորբի դեմ պայքարի և կանխարգելման աշխատանքների կազմակերպմանը, հիվանդների վարման ընթացքում առաջացած բժշկական թափոնների ոչնչացմանը, ատիպիկ թոքաբորբի կասկածով մահացած անձանցից ախտաբանաանատոմիական նմուշառմանը ներկայացվող պահանջները, որոնք ուղղված են ատիպիկ թոքաբորբի համաճարակաբանական հսկողության ապահովմանը:

3. Ատիպիկ թոքաբորբը կամ ծանր ընթացքով սուր շնչառական համախտանիշը, որպես նոր վարակիչ հիվանդություն առաջին անգամ արձանագրվել է Զինաստանում 2002 թվականի նոյեմբեր ամսում:

4. Հարուցիչը պատկանում է կորոնավիրուսների ընտանիքին: Սակայն վիրուսն իր հատկություններով տարբերվում է կորոնավիրուսների ընտանիքի մյուս վիրուսներից, քանի որ դրանք մարդու և կենդանիների շրջանում առաջացնում են բարձր վարակելիությամբ օժտված հիվանդություն:

5. Վիրուսը մակերեսների վրա չորացումից հետո պահպանվում է մինչև 48 ժամ: Վիրուսի կայունությունն արտազատուկներում՝ կղանքային զանգվածում պահպանվում է առնվազն 2 օր, իսկ մեզում՝ առնվազն 24 ժամ: Լուծով հիվանդների կղանքային զանգվածում, որը համարվում է թույլ թթվային միջավայր, հարուցիչները պահպանվում են ավելի երկար, մինչև 4 օր: Լուծով հիվանդի արտաթորանքներով ախտոտված մակերեսների վրա վիրուսը կարող է պահպանվել մինչև 4 օր:

6. Հիվանդության գաղտնի շրջանը 2-14 օր է, հաճախ՝ 3-5 օր:

Գ Լ ՈՒ Խ 2

ԱՏԻՊԻԿ ԹՈՔԱԲՈՐԲՈՎ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

7. Արտահիվանդանոցային և հիվանդանոցային ընդունելությունների, տնային կանչերի, բժշկական զննությունների ժամանակ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժաշխատողների, ընտանեկան բժիշկների կողմից ատիպիկ թոքաբորբ կասկածվում է այն անձանց շրջանում, ովքեր համապատասխանում են կասկածելի դեպքի ստանդարտ բնորոշմանը՝ համաձայն սույն կանոնների ձև N 1-ի:

8. Դեպքերի սահմանումը, ելնելով հիվանդության տեղական արտահայտման ձևերից, կարող է ենթարկվել փոփոխության: Բռնկումների ժամանակ կարող են մշակվել նաև դեպքերի աշխատանքային սահմանումներ:

9. Ատիպիկ թոքաբորբերով հիվանդների հայտնաբերման, այդ թվում՝ կասկածի դեպքում դեպքի մասին արտահերթ հաղորդվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 14-ի N 209-Ն հրամանի և սույն կանոններով հաստատված ձև N 3-ի:

Գ Լ ՈՒ Խ 3

ԱՏԻՊԻԿ ԹՈՔԱԲՈՐԲՈՎ ԴԵՊՔԵՐԻ ԱՆՏՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԲՈՒԺՈՒՄԸ

10. Ատիպիկ թոքաբորբի ախտորոշումն իրականացվում է՝

- 1) կլինիկական.
- 2) համաճարակաբանական.
- 3) լաբորատոր ցուցանիշներով:

11. Ատիպիկ թոքաբորբ կլինիկորեն ախտորոշվում է ըստ դեպքի ստանդարտ սահմանման՝ համաձայն սույն կանոնների ձև N 1-ի:

12. Ատիպիկ թոքաբորբի ախտորոշման համաճարակաբանական ցուցանիշներն են՝

- 1) համաճարակաբանական վերհուշի (անամնեզի) առկայություն՝

ա. սերտ շփում (անձ, ով խնամել է հիվանդին, ապրել է նրա հետ և ուղղակի կոնտակտ է ունեցել կասկածելի կամ հավանական հիվանդի արտազատուկների կամ կենսաբանական հեղուկների հետ) ատիպիկ թոքաբորբի կասկածելի կամ հավանական դեպքի հետ,

բ. տարբեր երկրների այն տարածքում գտնվելու հանգամանք, որտեղ արձանագրվել են ատիպիկ թոքաբորբի տեղական դեպքեր և որոնց ցանկը ներկայացվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից,

- գ. տարբեր երկրների ախտահարված տարածքում բնակվելու հանգամանք:

13. Ատիպիկ թոքաբորբը կարող է դիտվել որպես անսովոր կամ անսպասելի դեպք: Անսովոր դեպք է համարվում այն դեպքը, որն առաջացել է անհայտ ազդակից, կամ աղբյուրը, փոխանցողը, տարածման ուղին բնորոշ չէ տվյալ ազդակի առաջացրած դեպքին կամ անհայտ է, դեպքերի զարգացումն սպասվածից ավելի ծանր է (ներառյալ